Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-21/23 ծածկագրով «Բնակելի շենքեր. ՄասII. Անհատական բնակելի տներ» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանքի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30.03.2021թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահող՝ Ա. Չավուշյան
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ծատուրյան
Վ. Առաքելյան
Ս. Թորոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան
Բացակայում էր հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Ադամյան

1. Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Չավուշյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա) Մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

բ) Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 30.03.2021թ., ժամը 11:00-ին:

գ) Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

ՀՀ դրամ

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Նախահաշվային գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	«ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ	7 000 000	5 570 000	-	5 570 000
2	«Սեյսմանախագիծ» ՍՊԸ		6 700 000	-	6 700 000

դ) Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ե) Մասնակիցների հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. Գնման ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների մասին

(Ա. Չավուշյան)

2.1 Հիմք ընդունելով մասնակիցների կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը և գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահատող հանձնաժողովի կողմից հայտերը գնահատվել են հետևյալ կերպ.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	«ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ	բավարար
2	«Սեյսմանախագիծ» ՍՊԸ	բավարար

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցներ ճանաչել հետևյալ կազմակերպություններին.

Չափա-բաժնի համարը	Գնման առարկա	Ընտրված մասնակից	Հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից
1	Բնակելի շենքեր. ՄասII. Անհատական բնակելի տներ» ՀՀ շինարարական նորմերի մշակման, տեղայնացման աշխատանք	«ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ	«Սեյսմանախագիծ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Չավուշյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԱՏՐԻՈՒՄ ՊՐՈ ՍՏՈՒԴԻՈ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ – 0:

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

(Ա. Չավուշյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահող՝ ---------- Ա. Չավուշյան

Անդամներ՝ ---------- Գ. Ծատուրյան

---------- Վ. Առաքելյան

---------- Ս. Թորոսյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան